ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունիսի 2023թ. N 118 -Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ԹԻՎ 23-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ Վարչապետի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» N1550-Լ որոշման 2-րդ կետի 1)-ին ենթակետը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2023թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009թ. նոյեմբերի 2-ի N 62-Ա կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու և գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 23-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

06.06.2023

X

05 հունիսի 2023թ.
ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2023թ. հունիսի 5
թիվ 118-Ա որոշման

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Հ. Ղալումյան - Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետ

Ա. Նազարյան - Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Վ. Սուքոյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Ա. Սուքիասյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ

Զ. Մարդանյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի գլխավոր մասնագետ

Գ. Գասպարյան - Հանձնաժողովի անդամ, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Տավուշ> ՋՕ-ի «Իջևան-Ուտիք» տեղամասի պետ

Ջ. Թադևոսյան - Հանձնաժողովի անդամ, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության հողաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ

- Հանձնաժողովի անդամ, համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ):

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ

06.06.2023

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241